

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-9-7-Ա

ք. Երևան

14.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի սեպտեմբերի 19-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Գրանդ տոբակո» ՍՊԸ ընկերության (0061, Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Հրանտ Վարդանյան փողոց, 22, AM) «VAN» (No20212733) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «Վան Van», «VAN BAH ՎԱՆ» («Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, Երևան, Շահամիրյանների 22, N 7909, 24.03.2004, N 23686, 10.11.2015), «VAN», «Van Classic Blue» («Գրանդ Տոբակո» ՍՊԸ, Երևան, Շահամիրյանների 22, N 23635, 10.11.2015, N 27340, 14.05.2018) բառային և համակցված ապրանքային նշանների նկատմամբ: «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ, 130-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է համարվում հայտարկված ապրանքային նշանում առկա «VAN» բառը, որն ունի ձայնային նմանություն և ամբողջությամբ ներառված է գրանցված ապրանքային նշաններում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական

փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: Հետագա քննարկման ժամանակ խորհրդի մի քանի անդամներ ներկայացրեցին իրենց կարծիքը այն մասին, որ կարելի է բավարարել բողոքը, քանի որ չնայած նրանց հասցեները տարբեր են, սակայն հայտատուն և հակադրված ապրանքային նշանի իրավատերը նույն ընկերությունն են և տրամաբանությունը հուշում է, որ ներկայացված ապրանքային նշանը պետք է գրանցվի:

Փորձաքննության բաժնի պետը համաձայն չէր խորհրդի մեծամասնության կողմից ձևավորված բողոքը բավարարելու կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 5 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված «Գրանդ տոբակո» ՍՊԸ ընկերության «VAN» (No20212733) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ